ՐԱՓՓԻ

Հարեմ

1 - Բ

Այդպես սկսեց Զեյնաբ-խանումն յուր հեքիաթը.

«Կար չկար, կար մի քաղաք: Այն քաղաքում նստում էր Գուրջիստանի թագավորն: Այն քաղաքը շինված էր այն սարերի մեջ . ուր Ղափ-Դաղի գլխին շղթայած է ջինների գլխավորը: Դրախտը շատ մոտ է այն երկրին և հրեշտակների նվագածությունները դեռ լսելի են լինում այնտեղ: Դրախտից բխած գետերից մինն անցնում է այն քաղաքի միջից և ջրում ծաղիկներով զարդարված դաշտերը: Այնտեղ կանայք ջուր չեն տաքացնում լողանալու համար տարտարոսի բոցերն, անդունդից դուրս գալով, տաքցնում են աղբյուրները և նրանց ջրով լողանում են մարդիկ:

Էլել է, չէ՛ էլել, էլել է այն քաղաքում մի այրիկ և մի կնիկ . նրանք ունեցել են մի սիրուն աղջիկ, որի անունը լինում է Ալմաստ Նա լինում է մի աղջիկ՝ այնպես վարդ թշերով, սև աչքերով, թուխ հոնքերով: Տասն և հինգ գարուն ծաղկում էին ծաղիկները, և Ալմաստը տասն և հինգ տարի լսում էր սոխակի սիրահարական երգը: Նա էլ ուներ յուր սիրահարը, յուր սիրով այրված, կրակված սոխակը դա մի պատանի էր մանկահասակ: Սավալանի նռները չունեին նրա թշերի գույնը. Շիրազի վարդերը չունեին նրա շրթունքի նրբությունը և կանաչազարդ սալբի չինարին յուր շիտակությունով չէր կարող համեմատվել նրա վայելչահասակ բոյի հետ: Նրա բնավորությունն այնպես քաղցր էր, որպես հրեշտակի շունչը: Նա սրտով այնքան բարի էր, որքան մինարեթի աղավնին: Այդ պատանու

անունը կոչվում էր Մեխակ: Հնդկաստանի մեխակը միայն կարող էր լինել այնպես անուշահոտ և անմեղ, որպես նրա հոգին: Մեխակը և Ալմաստը ծնվել էին իրանց մայրերից մի օրում և մի ժամում: Դեռ նրանց ականջները չէին լսել առաջին ձայնն օրորոցի երգի, երբ նորածինների ծնողքը վճռեցին նրանը ապագան նրանք օրհնեցին Ալմաստի և Մեխակի ամուսնական նշանադրությունը: Երեխաների օրորոցի դաստակից քարշ էին տված ուլունքներով զարդարված խաղալիքների մի-մի շարք, որոնց մեջ անցուդարձ էին մի-մի հատ մատանի: Այդ մատանիներն էին նշաններ նրանց ծնողաց ուխտադրությանը: Պառավ տատը շարժում էր օրորոցը և մեղմիկ ձայնով նանիկ էր կարդում, երեխայքը խաղում էին մատանիների հետ, մինչև անուշիկ քունը հանգստացնում էր նրանց:

«Երեխայքը մեծանում են: Մատանիներն օրորոցի խաղալիքիդ դառնում են նրանց մատների զարդարանք, մինչև պատանին և օրիորդը հասկանում են նրանց նշանակությունը, հասկանում են, և սիրում են միմյանց . . .

«Հանդարտ լուսնկա գիշերներում, գաղտնի ծնողներից, ծառերի խորին ստվերի տակ, երկու սիրահարներն անցկացնում էին սիրո քաղցրիկ րոպեները . . . Սոխակը նախանձում էր նրանց, երբ մտածում էր, թե յուր վարդը շատ անգամ ծակոտում էր նրա սիրտն յուր փշերով, բայց Ալմաստը և Մեխակը, փուշեր չունեին . . . : Աներևույթ փերիները նախանձվում էին նրանց, երբ տեսնում էին, որ անմահների խմբի մեջ չկային այնպիսի սիրականներ . . .

«Բայց նրանց պարզ, հրեշտակային սերը չտևեց երկար: Մի սարսափելի դեպք բաժանեց նրանց մեկ-մեկուց:

«Հեռու, արևելքից հայտնվում է այն քաղաքում մի ներքինի թագավոր: Նա ունենում է յուր հետ զորքերի մեծ բազմություն: Այդ մարդիկը ջրի տեղ խմում էին ադամորդիների արյուն, իսկ հացի տեղ՝ ուտում էին նրանց միսը: Նրանց սրտումը գութ չկար: Անտառի վագրը և բորենին ավելի բարեխիղճ էին, քան թե նրանք: Թագավորի զորքերը կրակ են տալիս այն գեղեցիկ քաղաքին, կողոպտում են բնակիչներին, կոտորում են ալևորներին, մորթում են ծծկեր երեխաներին յուրյանց մոր գրկումը, իսկ մանկահասակ աղջիկները և տղերքը գերի են առնվում: Ուղտերու ամբողջ քարավաններով տանում էին խեղճ գերիներին դեպի

ներքինի թագավորի աշխարհն, որոնց հետ և գերի է ընկնում Ալմաստն: Այնուհետև նա Մեխակից ոչինչ տեղեկություն չէ ունենում: «Երբ թագավորը հասնում է յուր քաղաքը, բաժանում է բերած կողոպուտը և գերիներին յուր զորքերի մեջ, Ալմաստին վեր է առնում թագավորի գլխավոր զորապետներից մինը՝ մի շահզադե, որը նրա գեղեցկության համար, կարգում է որպես յուր նշանավոր տիկիններից մինը հարեմի մեջ: Զարդարում է նրան ոսկով և գոհարներով, բնակեցնում է թանկագին խալիներով և շալերով շքեղացրած դահլիճների մեջ, կերակրում է նրան մեղրով և շաքարով:

«Տիկնոջ պատուհանում գրած է փղոսկրյա վանդակի մեջ մի թութակ, երբ տիկինն յուր տխուր հուսահատական րոպեներում ածում է թառի վրա, թութակը երգում է վանդակի միջից.

«Իմ տիկինը կերակրում է
Ինձ նշերով, շաքարով,
«Իմ վանդակը զարդարում է
Յուր քնքշիկ ձեռքերով»:

«Բայց գե՛թ մի ժամ ուրախ լինել
Ես չեմ կարող իմ կյանքում,
Երբ հիշում եմ, թե գերի եմ
Այդ նեղ, փակված վանդակում» . . .

«Տիկինը լսում է թութակի խոսքերը և նրա սրտում զարթնում են միևնույն զգացմունքները: Նա հիշում է հայրենի երկիրը, նա միտն է բերում յուր հայրը, մայրը և ազգականները: Նա հիշում է յուր կորցրած սիրականը քաղցրիկ անուշահոտ Մեխակին: Նա զգում է, որ ինքը նույնպես մի գերի է, մի գերի հեռու աշխարհում, փակված հարեմի վանդակի մեջ և կենդանի թաղված այն տխուր գերեզմանում . . . : Եվ իսկույն անցյալն յուր սարսափելի կերպարանքով պատկերանում է նրա աչքի առջև: Նա տեսնում է յուր հոր, յուր մոր և ազգականների դիակները թավալված արյան մեջ՝ յուր հայրենական օջախում, և յուր այժմյան ամուսինը սուրը ձեռքում կանգնած է նրանց մոտ . . . : Եվ իսկույն

ծնվում է տիկնոջ սրտում մի զարհուրելի ատելություն դեպի այդ դահիճն, որ կոտորեց յուրյան ծնողքը, որ խլեց իրան հայրենական օջախից, որ և այսուամենայնիվ կոչում էր նրան յուր կին . . .

«Թե քնած թե արթուն՝ միշտ տիկնոջ ալքի առջև էր այդ արյունոտ տեսարանը և օրեցօր ավելի ու ավելի բորբոքվում էր նրա սրտի մեջ կատաղի ատելությունը դեպի յուր գերիչը . . .

«Անցնում են մի քանի տարիներ:

«Միակ միտքն, որ ավելի շատ էր տանջում տիկնոջը էր յուր Մեխակի մասին: Նա թեև համարում էր նրան սպանվածների թվում, բայց տակավին այդ մասին մի որոշ տեղեկություն չուներ:

«Մի անգամ, տիկինն յուր աղախիններով և ծառաներով գնում է յուրյանց մերձակա այգին, որ գտնվում էր քաղաքին մոտ: Այնտեղ ընդարձակ լճակի ափին կանգնած էր մեծաշեն ամառանոց: Գիշեր էր: Տիկինը վերնահարկի բարձրությունից նայում էր դեպի լճակն, որի մեջ լուսնյակը խաղում էր արծաթափայլ շողքերով: Երկար նա այնպես նայում էր և նրա սրտի մեջ զարթնում էին անցած, գնացած օրերի տխուր հիշատակները . . . : Նա ցած իջավ ապարանքի բարձրությունից և սկսեց միայնակ պտտել ծառազարդ ճեմելիքնելով և լսել թռչունների գիշերային ճռվռոցը:

«Հանկարծ հայտնվում է նրա առջև մի անծանոթ տղամարդ:

«Ի՞նչպես համարձակվեցար դու մտնել այստեղ», ասում է տիկինը և կամենում է կոչել ծառաներին, որ բռնեն նրան:

«Անծանոթ տղամարդը չոքում է տիկնոջ առջև և ասում է . «եթե ճանաչեք ինձ, տիկին, չեք բարկանա իմ վրա:

«Տիկինն ուրախությունից շփոթվում է: Ծանոթ ձայնը նրա կորսված Մեխակի ձայնն էր:

«Աստվա՛ծ իմ . . . կոչում է տիկինը և գրկում է նրան:

«Մի քանի րոպե նրանք խոսք չեն գտնում միմյանց պատասխանելու: Երբ փոքր-ինչ սթափվում են իրանց հոգեզմայլությունից, տիկինը տանում է երիտասարդին մերձակա հովանոցն, այնտեղ նստում են:

«Ի՞նչպես դու հայտնվեցար այստեղ, հարցնում է նրանից տիկինը:

Ես էլ գերիների թվումն էի, պատասխանում է երիտասարդն, ինձ գերի անող զորապետի բանակն անցավ մի քանի օրով առաջ, և մենք բաժանվեցանք միմյանցից:

«Իսկ այժմ ո՞րտեղ ես լինում, հարցնում է տիկինը:

«Ես կառավարում եմ նույն զորապետի քաղաքիս Սար Ասքերի կալվածներն, իմ անունը կոչվում է այժմ Քերիմ-բեկ: «Ուրեմն դու ուրացա՞ր կրոնքդ:

«Ուրացա, Ալմաստ, որովհետև ճար չունեի, ուրացա միայն առերես: Բայց մեր հայրերի կրոնքը միշտ վառ կմնա իմ սրտում. որպես քո սերը . . .

«Դու դեռ սիրո՞ւմ ես ինձ . . . հարցնում է տիկինն անուշ բերկրությամբ:

«Սիրում եմ, Ալմաստ . . . Նրանց խոսակցությունը ընդհատում են տիկնոջ աղախիններն, որոնք, տեսնելով նա շատ ուշացավ, պտրում էին նրան: Երիտասարդը տեսնելով նրանց, աներևութանում է ծառերի խավարի մեջ:

«Մյուս օրը տիկինը տուն է դառնում և այնուհետև այլևս չէ տեսնում այն նազելի պատկերը: Նա միշտ երիտասարդի վրա է մտածում և միշտ նրան է տեսնում յուր երազներում . . . : Երբ տաք միջօրեական պահուն տիկինը պառկած է յուր սենյակում, նրա սևամորթ աղախինը նստած է կողքին: Աղախինը հեքիաթներ է ասում և հով է սփռում տիկնոջ երեսին, որ նրա քունն անուշցնե, բայց նա չէ կարողանում քնել, որովհետև մտածում է յուր Մեխակի վրա» . . . :